ԱՇՈՒՂ ԶԻՎԱՆԻ. Անհայտ երգեր, աշխատասիրությամբ Թովմաս Պողոսյանի, *Երևան, «Լուսակն» հրատ., 2009, 670 էջ:*

Երաժշտագետ Թովմաս Պողոսյանը հայագիտության դատին է հանձնել «Աշուղ Զիվանի. Անհայտ երգեր» ընդհանուր խորագրով աշխատությունը: Դրա առաջին մասը նվիրված է Զիվանու անտիպների պատմաբանասիրական հետազոտությանը, իսկ երկրորդ մասն ընդգրկում է մեծ աշուղի անտիպ ստեղծագործությունների ամբողջական ժառանգությունը՝ մոտ 420 երգ ու բանաստեղծություն, որոնց ձեռագրերը պահվում են Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանի՝ Զիվանու անունը կրող համապատասխան ֆոնդերում: Ուսումնասիրության խմբագիրն է բանագետ, բանասիրական գիտությունների թեկնածու Ալվարդ Ղազիյանը:

Սույն աշխատանքը բաղկացած է առաջաբանից, ներածությունից, վեց գլխից, եզրակացություններից, Զիվանու «Անհայտ էջերից»: Կցված են հավելված (անավարտ ստեղծագործություններ, պատառիկներ), ծանոթագրություններ, Զիվանու ստեղծագործությունների համահավաք մատենագիտական ցանկ, հատուկ անունների բառարան:

Առաջաբանում ներկայացված են ժողովածուի կազմման սկզբունքները: Երգերը դասակարգված են այբբենական կարգով: Երգի ստեղծման ժամանակը, տեղը նշված է յուրաքանչյուր ստեղծագործության վերջում: Սկզբնաղբյուրների պահպանման վայրի մասին անհրաժեշտ տեղեկությունները զետեղված են աղյուսակում և ծանոթագրություններում: Ներածության մեջ Թ. Պողոսյանն իրավացիորեն հիմնավորում է Զիվանու անտիպ երգերի ուսումնասիրության ու տպագրության մշակութաբանական անհրաժեշտությունը, որը հիմք կլինի հայ տոհմիկ ազգային երգի հետագա գոյության ու զարգացման համար: Զիվանու անտիպների հետազոտությունը հեղինակը կատարում է համեմատական մեթոդով:

Առաջին գլխում հեղինակը ներկայացնում է Զիվանու կյանքը և նրա անտիպ ժառանգության հետ կապված մանրամասներ:

Երգ ու նվագի նկատմամբ սերը վաղ է արթնանում պատանի Զիվանու (Սերոբ Լևոնյան, ծնված 1846 թ. Զավախքի Կարծախ գյուղում՝ Բասենից գաղթած Բենկոյենց Գասպարի ընտանիքում) հոգում: Վեց տարեկանում որբացած տղան ապրում է հորեղբոր խնամքի տակ՝ որբի դառը ճակատագրով, ում մորը, կարիքից դրդված, ամուսնացրել էին ուրիշ գյուղում: Նա սիրով և ուշադրությամբ էր լսում Կարծախ այցելած աշուղների երգերն ու զրույցները: Զիվանու հոգում հետզհետե ամրապնդվում է աշուղ դառնալու ցանկությունը, ու ինքն էլ է սկսում երգեր հորինել: Նա հինգ տարի աշակերտում է համագյուղացի աշուղ Սիայուն, հմտանում աշուղական երգարվեստի մեջ: 1864 թ. Զիվանին հորեղբոր հետ ճանապարհորդում է. լինում Թիֆլիսում, Ալեքսանդրապոլում: Նա Կարծախ այցելած երիտասարդ աշուղ Սազայու հետ համագործակցում է յոթ տարի, աշխատում են նաև Թիֆլիսում: 1871 թ. ալեքսանդրապոլցի սրճարանատեր Տալոյանները Զիվանուն հրավիրում են Ալեքսանդրապոլ՝ իրենց սրճարանում երգելու: Այդ հրավերը ճակատագրական դեր է կատարում Զիվանու կյանքում: Զիվանին ջերմ ընդունելության է արժանանում Ալեքսանդրապոլի հասարակության կողմից, կապվում է Շիրակի մայրաքաղաքի հետ, ընտանիք կազմում՝ 1872 թ. ամուսնանալով Տալոյան Հովհաննեսի դստեր՝ Աշխենի հետ, զավակներ ունենում: Հայ իրականության մեջ նա առաջին անգամ Ալեքսանդրապոլում կազմակերպում է Շիրակի 25 հայ աշուղներին միավորող կազմակերպություն, ընտրվում նրանց ավագը: Ապա բացում է աշուղական դպրոց, որտեղ ուսուցանվում էին ոչ միայն աշուղական արվեստին տիրապետելու հմտութ-

յուններ, այլև՝ գլխավորապես մայրենի լեզվով երգելու, հայկական ժողովրդական երգարվեստի ավանդներով առաջնորդվելու կարողություն, մի երևույթ, որով և սկզբնավորվեց հայ աշուղական երգարվեստի դպրոցը, որի փայլուն ներկայացուցիչն ինքը՝ Ջիվանին էր: Աստիճանաբար ամբողջանում է Ջիվանու՝ աշուղ-երգչի դիմանկարը՝ իբրև մշակութային, հասարակական նշանակալից գործչի:

Թ. Պողոսյանի երկարամյա որոնումները հանգեցրին այն եզրակացության, որ անվանի աշուղի ստեղծած ու մեզ հասած տպագիր ու անտիպ երգերի թիվը հասնում է 1180-ի, որից 400-ից ավելին՝ անտիպ: Աշուղագետն իրավամբ գտնում է, որ Ջիվանին պետք է գնահատվի ու արժևորվի ըստ ամենայնի իր բոլոր ստեղծագործություններով, լինեն դրանք տպագիր, թե անտիպ, թարգմանություն, թե փոխադրություն:

Աշխատության երկրորդ գլխում հանգամանորեն քննված են Ջիվանու անտիպ ժառանգության պատմահայրենասիրական, հայրենապաշտական բնույթի երգերը: Դրանք վերաբերում են հայրենիքի վաղեմի փառքին, նրա անձնվեր քաջ հերոսներին, վերջիններիս ոգեկոչմանը, իրենց կյանքը հայրենիքի ազատագրության սեղանին դրած նորօրյա հերոսներին, հայրենասեր, ազգի միաբանության ջատագով հոգևորականներին: Ջիվանին կոչ է անում ապավինել սեփական ուժերին և զենքի ուժով պաշտպանել հայրենիքը:

Երրորդ՝ «Դավանանքը, մարդը Ջիվանու անտիպ ստեղծագործություններում» գլխում վեր է հանվում Աստծուն, աստվածայինին, կրոնին ու հավատին նվիրված երգերի փիլիսոփայական, բարոյագիտական ու ազգամիավորման նշանակությունը, դրանց գեղարվեստական ու ճանաչողական արժեքը:

Աշխատանքի չորրորդ գլուխը կոչվում է «Ժամանակը և աշուղը»: XIX դարի վերջին և XX դարի սկզբին տնտեսական նոր հարաբերությունների հաստատումը իր հետ բերում է բարոյական արժեքների գնահատման նոր չափանիշներ: Ջիվանին ապրել ու ստեղծագործել է մայր ժողովրդի պատմության արտակարգ բարդ, հակասություններով խճճված ողբերգական այդ դարաշրջանում: Ժամանակը Ջիվանին գնահատում է իր՝ քրիստոնեական դավանանքի բարոյականության չափանիշներով, իսկ աշուղը նրա համոզմամբ պետք է լինի ազատ, անկախ, անկաշկանդ, ենթարկվի ի վերուստ իրեն շնորհված ձիրքին, անսա իր հոգու կանչին և խղճի ձայնին, լինի բարու ու սիրո թարգման:

Հինգերորդ գլուխը նվիրված է «Սիրո, խրատական և այլ անտիպ երգերին»: Աշուղի համար կյանքն առանց սիրո գոյություն չունի: Ջիվանին սերը երգում է մարդուն բնորոշ զգացմունքների ողջ բազմազանությամբ՝ սեր կնոջ, բարեկամի, ծնողների, զավակների, ընկերոջ ու կյանքի ընկերուհու հանդեպ:

Աշխատության վեցերորդ գլխում Թ. Պողոսյանը դիտարկումներ է անում Ջիվանու անտիպ ժառանգության գեղարվեստաարտահայտչական միջոցների վերաբերյալ, մեկնաբանում է նրա կողմից բանահյուսական սյուժեների՝ զրույցների, առակների աշուղական տաղաչափության կանոններով վերաստեղծած հյուսվածքները: Ջիվանու մեծագույն ծառայությունն այն է, որ հիմնադրեց և զարգացրեց հայ աշուղական երգարվեստի ազգային դպրոցը: Իրավացի է աշուղագետ-երաժշտագետ Մ. Մանուկյանը՝ գրելով, թե «Հայ աշուղական երգարվեստում Ջիվանին եղավ առաջիններից մեկը, որ ապավինելով գրական լեզվին, իր երգերի համազգային մատչելիությունն ու տարածումը ապահովեց» (էջ 97)[1]:

Ջիվանու ստեղծագործական ուղին համընկել է կյանքում և մշակույթի մեջ կատարվող խոր փոփոխություններին: Աշուղական երգարվեստի տաղաչափական կանոնների հմուտ գիտակը նոր ժամանակների խմորումներն արտացոլել է իր երգերում: Ավանդապահ ու ներհուն Ջիվանին չէր կարող ձևացնել, թե անտակ-անհատակ հոգսերից անհալած է իր ժողովուրդը և խնդիր չունի աշխարհի հետ:

1905 թ. Ռուսաստանում ծավալված հեղափոխական շարժման արձագանքը հասել էր նաև Անդրկովկաս: 1905–1906 թթ. կո-

---

[1] *Ջ ի վ ա ն ի. Զայնագրյալ երգարան, աշխատասիրությամբ Մանուկ Մանուկյանի, Երևան, 1998, էջ 2:*

տորածների ալիքը տարածվել էր Հայաստանում: Իր երգերում Ջիվանին պարսավում է թուրք-թաթարական ազգայնամոլ տարրերի հրահրած կոտորածները խաղաղ աշխատանքով զբաղված հայերի նկատմամբ, ջատագովում դիմադրական մարտերի հայ հերոսներին՝ Համազասպին, Մելիքին, Մարտիրոսին, Կյուրեղին, Ասատուրին, Թադևոսին, Տիգրանին, Մուշեղին, Հայրոյին, Մուսային, Կնյազին և այլոց, բացահայտում ցարական Ռուսաստանի ու եվրոպական դիվանագիտության աչառու խաղերը, որոնք, ցավոք, աղերսվում են նաև այսօրվա աշխարհաքաղաքական բարդ զարգացումներին: 1906 թ. Թիֆլիսում գրած «Հեշտ չէ» վերնագիրը կրող խաղում Ջիվանին «բիրտ այպ ու ծանակ, գարշ ամոթանք» տարած իր ժողովրդին մխիթարում է ապագայի հույսով.

Այսքան նեղություն, վիշտ, տառապանք
տանիլը հեշտ չէ,
Երկար ժամանակ խիստ հալածանք տանիլը հեշտ չէ,
Մենք լեզու չունինք, բռնակալը՝ խիղճ
ու մտածմունք,
Բարձր տեղերից արհամարհանք տանիլը
հեշտ չէ (էջ 132):

Խորապես ըմբռնելով հայ ժողովրդի քաղաքական վիճակը և հատկապես սուլթանական Թուրքիայի ճիրաններում հոշոտվող հայության վիշտը՝ հայրենասեր աշուղը «Դասիթան» կոչվող երգում դարավոր պայքարի ու մաքառումների պատմությունը խտացնում է խոր հուզականության և ուժեղ ընդհանրացումների մեջ.

Քեզնից դժգոհ եմ, բաղդի թագավոր,
Ինչո՞ւ առաջինը վերջին արիր դու,
Արևելյան փայլուն աստղը զորավոր,
Կտրատեցիր, կիսալուսին արիր դու
(էջ 587):

Աշուղ Ջիվանին, իհարկե, դեմ է ազգերի միջև գժտություն սերմանող քարոզչությանը, «Իվերիա» լրագրի հայատյաց գործունեությանը և չի կարող աչք փակել մեր հավատակից վրացիների բազմանշանակ դիվանագիտական խաղերի վրա:

Հատկանշական է հայ հայտնի երգիծաբան Կ. Մելիք-Շահնազարյանի (Տմբլաչի Խաչան) և Ջիվանու՝ նույն ժամանակաշրջանին վերաբերող մտահոգությունների ընդհանրությունը հայ-վրացական հարաբերությունների շուրջը: Տմբլաչի Խաչանը ևս մեր հարևաններից չի ակնկալում քաղաքական առաքինության և ոչ մի դրսևորում[2]:

«Բաղդի թագավորից դժգոհ» Ջիվանին, այնուամենայնիվ, բախտավոր մարդ էր: Նա ապրեց իր ժողովրդի կյանքով, հավատաց նրա լուսավոր ապագային, հուսադրեց նրան, որ «ձախորդ օրերը կուգան ու կերթան», խարազանեց տգիտությունը, անարդարությունը և հոռի բարքերի հետևորդներին խրատեց՝ «Խելքի աշեցե՛ք»: Ջիվանին գովերգեց լուսավորությունը, ստեղծեց աշուղական իր ազգային դպրոցը, երգեց մաքուր ու անաղարտ սերը՝ «Նազելուս ամպ է իջել»...

Ջիվանին ունեցավ Գարեգին Լևոնյանի նման արվեստաբան որդի, ով դարձավ իր հոր տպագիր ժառանգության առաջին արժանի ուսումնասիրողը[3], իսկ ՀՀ վաստակավոր արտիստ, աշուղագետ Թովմաս Պողոսյանի անձնադիր նվիրումով Ջիվանու «Անհայտ երգերը» մեկընդմիշտ թոթափեցին մոռացության փոշին և ստացան իրենց հավասարազոր գիտական գնահատությունը՝ առավելագույնս ճշտելով ժողովրդական երգիչ, փիլիսոփա, բարոյագետ Ջիվանու տեղն ու դերը հայ աշուղական մշակույթի վեցհարյուրամյա պատմության մեջ:

ԹԱՄԱՐ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

---

[2] *Թ. Հայրապետյան. Կ. Մելիք-Շահնազարյանի (Տմբլաչի Խաչան) կյանքն ու գործը.– Հայ ազգագրություն և բանահյուսություն, հ. 24, Երևան, 2007, էջ 63, Տմբլաչի Խաչան. Զուռնա-Տմբլա, գ. Բ, Վաղարշապատ, 1908, էջ 233:*

[3] *Գ. Լևոնյան. Աշուղների մասին, Պատմական-քննական հայացք.– «Ազգագրական հանդես», գ. X, Թիֆլիս, 1903,* Աշուղ Ջիվանի. *Երգերի ժողովածու, ներածական տեսությամբ, ծանոթագրություններով և խմբագրությամբ Գ. Լևոնյանի, առաջաբանը՝ Գ. Վանանդյանի, Երևան, 1936:*